Կուկիոյ Նորաշէն Սբ. Աստուածածին եկեղեցու տղայոց միդասեան ուսումնարանի եռամեայ հաշիւը 1886 ամի 1 Սեպտ.։

Ուսումնարանը բացուեցաւ 1886 թուի Սեպտեմբերի 15, ից. ծողովրդական ընտրութեամբ և Վեհափառ Հայրապետի հրկտ. 23, 1886 ամի № 630 կոնդակով հաստատութեամբ՝ Հոգաբարձութիւնս սկսեց կառավարել ուսումնարանը. բացուեցաւ երեք պատրաստական դասատուն. հրաւիրուեցան ուսուցիչներ, որոնց առաջին տարին ուսումնարանը վճարում էր դասին 17 ռուբլի, իսկ հետևեալ տարիները խնայողութեամբ կարելի եղաւ այդ վարձատրութիւնը 20 ռուբլու հասցնել։

Առաջին տարին բոլոր ուսուցիչները վարձով էին. իսկ երկրորդ տարուայ սկզբին առաջարկեց իւր ձրի ծառայութիւնը պ. Կոստանդին Շարբարոնեանցը, որ երկու տարի շաբաթական 6—7 դաս տալով ամենայն անձնուիրութեամբ ծառայեց դպրոցին, որի համար Հոգաբարձութիւնս բարոյ համարեց իբրև խրախոյս, մեր եռամեայ գործունէութեան վերջը, մի համեստ ընծայ տալ նորան։

Առաջին տարին դպրոցիս աշակերտների թիւն էր 76, որոնցից 38 թոշակով (տարին 1 ից մինչև 3 ռուբլի), իսկ 38 ձրի. երկրորդ տարին 87, որոնցից 69 թոշակով (1 - 5 ռուբլի) իսկ 18 ձրի. իսկ երրորդ տարին 100, որոնցից 77 թոշակով (1 - 6) ռուբլի) իսկ 23 ձրի։

Թոշակ ստացուում էր միմիայն դասագրքերի և դասական պիտոյքների համար, որ ուսումնարանը ձրի էր մատակարարում ամենքին։

Առաջին տարին ուսումնարանից աւարտեցին 6 հոգի, երկրորդ տարին՝ 6, և երրորդ տարին 12, որոնցից մեծ մասը մտան Ներսիսեան դպրոցի առաջին դասարանը։

Երեք տարուայ ընթացքում հոգաբարձական ժողովներ եղան 15 անգամ, իսկ հոգաբարձական և ուսուցչական խառն ժողովներ 32 անգամ, ընդամենն 47 ժողով։

Համառօտ պատկեր եկամտից և ծախսերայ ընդհանր.

Ուսումնարանը բացուելիս չունէր և ոչ մի կոպէկ։

1886—7

Մուտք.

	Ռ.	Կ
Եկեղեցուց ստացուած է ռոճիկների համար . .	1115	47
Ներսիսեան դպրոցից Էֆէնդեանցի կտակած գումարից	52	66
Աշակերտներից դասական պիտոյքների համար , .	189	

Եկեղեցուց սեղան և աթոռներ գնելու ուսուց. սենեակի համար	7	
Հին տեսարերի վաճառումից	1	55
	1365	68

Տաք.

Ռոճիկ ուսուցչաց և ծառայի	1178	
Դասագրքերին և դաս. պիտոյքներին վճարած է	105	42
Կարասիք է գնուած	13	50
	1296	92

1887—8

Մաք.

Մնացորդ անցեալ տարուանից	68	76
Եկեղեցուց	1266	66
Ներսիսեան դպրոցից	48	23
Աշակերտներից	267	
	1650	65

Տաք.

Ռոճիկ ուսուցչաց	1319	89
Դասագրքերի և դասական պիտոյից	115	42
Բլանկների տպագրութեան	10	60
Մատենից գին և այլ մանր ծախքեր	7	50
	1453	41

1888—9. Մաք.

Մնացորդ անցեալ տարուանից	197	24
Եկեղեցուց	1320	
Ներսիսեան դպրոցից	36	48
Աշակերտներից	239	50
Վաճառեալ տեսարերից	2	75
	1795	97

Տաք.

Ռոճիկ ուսուցչաց	1390	93
Դասական պիտոյքներին և գրքերին	134	94
Կարասիք	25	70
Փայտ և ջուր *)	22	10

(*) Առաջին տարին դրած են դրուած եկեղեցու շինութիւնից մնացած անպէտք փայտերը։

Բլանկներ և յայտարարութիւն լրագիրներում	6	50
Մատենից գին	2	
Նորոգութիւն ուսումնարանի տան	11	79
	1593	96

Ծախքը մուտքից հանելով առ 1 սեպտեմբերի 1889 թուի մնում էր ուսումնարանի դրամարկղում 202 ռուբլի 1 կոպէկ։

Բացի դորանից սոյն երեք տարուայ ընթացքում եղան հետևեալ կտակաւանդութիւնները յօգուտ դպրոցիս։

1. Առաջին տարին վախճանուելով դպրոցիս հոգաբարձու Մովսէս Դոնդարեանցը կտակեց ուսումնարանին 1000 ռուբլի։ որ դեռ ստացուած չէ ժառանգներից *)։

2. Հանգուցեալ Զաքարիա Ղարղաճեանցի կտակած 500 ռուբլուց հոգաբարձութիւնս ստացաւ արդէն 300 ռուբլի. մնում է ստանալի 200 ռուբլի։

Ուրեմն ուսումնարանը 1889 թուի սեպտ. 1ին ունէր առ ձեռն դրամ 500 ռուբլի 1 կոպէկ և 1200 ռուբլի ստանալիք։

Հոգաբարձուք՝ Գէորգ Յոհ. Աղանէանց, Յարութիւն Ն. Գրիգորեանց՝ Եռոյէ Աբրահամեանց։

ՀԱՇԻՒ

Ելից և մուտից դրամոց եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր-Բայազիտ քաղաքի վասն 188⁷/₈ ուսումնական տարւոյ։

ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ

1. Ուսումնարանապատկան դրամագլխի գումարն է երկու հազար ինն հարիւր քառասուն ռուբլի—(2940 ռ.)

2. Սրանից առած է տղայոց Ս. Մեսրոպեան ուսումնարանի շինութեան վրայ ծախսելու երեք հարիւր եօթանասուն և եօթ ռուբլի—(377 ռ.)

3. Մնում է դրամագլխից զանազան անձանց վրայ շահեցնելու համար մուրհակագրերով երկու հազար հինգ հարիւր վաթսուն և երեք ռուբլի—(2563 ռ.)

(*) Կտակուկատարների մէջ եղած տարաձայնութեան պատճառով հոգաբարձութիւնս չկարողացաւ մի որ եւ է կերպով համաձայնութիւն կայացնել նոցա հետ։ ուստի դիմեցինք կոնսիստորիայի օգնութեան։ որով համաբեռ թէ գործը վերջանալու վրայ է։